ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ՆԱԺԱՐՈՏՅԵԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 47 - 48 (16442) ՇԱԲԱԹ, 18 ՀՈՒՆԻՍԻ 2016 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ՎՐԱՍՏԱՆ-ԳԵՐՄԱՆԻԱ

ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆԸ ԱՆՀԱՄԲԵՐՈՒԹՅԱՄԲ ՍՊԱՍՈՒՄ Է ԱՆԱՅՑԵԳՐԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆԸ»

Հունիսի 15-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին պաշտոնական այցով գտնվում էր Գերմանիայում:

Այցի շրջանակներում, Վրաստանի կառավարության ղեկավարը հանդիպում ունեցավ Գերմանիայի Դաշնային կանցլեր Անգելա Մերկելի, Բունդեսթագի նախագահ Նորբերդ Լամերտի, արտաքին գործերի նախարար Ֆրանկ Վալտեր Շտանմայերի, կրթության եւ հետազոտությունների նախարար Յոհան Վանկի, Բունդեսթագի արտաքին կապերի կոմիտեի նախագահ Նորբերդ Ռյոդգենսի հետ:

Այցի շրջանակներում, Գիորգի Կվիրիկաշվիլին արտաքին քաղաքական հարցերով ելույթ ունեցավ Ֆրիդրիխ Էբերտի հիմնադրամում, հանրային դասախոսություն կարդաց Հումբոլդի համալսարանում, մասնակցեց վրաց-գերմանական բիզնես-ֆորումի աշխատանքին:

Գիորգի Կվիրիկաշվիլու եւ Անգելա Մերկելի

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՏԱՐԵՐՔ

ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ՏԱՐԵՐԱՅԻՆ ԱՂԵՏԻ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Հունիսի 13-ին, թբիլիսյան ջրհեղեղի տարելիցին, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին եւ առաջին տիկին Մական Չիչուան հարգանքի տուրք մատուցեցին 2015 թվականի հունիսի 13-ին զոհվածների հիշատակին:

Գիորգի Մարգվելաշվիլին շնորհակալություն հայտնեց բոլոր նրանց, ովքեր մեկ տարի առաջ անձնազոհաբար պայքարում էին տարերքի դեմ եւ ակտիվ մասնակցություն ցուցաբերում այդ հետեւանքների վերացման գործին: «Այսօր մենք հիշում ենք անցյալ տարվա աղետի զոհերին եւ անցյալ տարվա հերոսներին: Այս վայրը, որտեղ մենք հիմա գտնվում ենք, միշտ կհիշեցնի այն ծանր րոպեների մասին, որոնք մենք միասին ապրեցինք անցյալ տարի եւ որոնց հաղթահարման համար միավորվեցինք»,- հայտարարեց Գիորգի Կվիրիկաշվիլին:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏ

ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՍՏԵՂԾՎՈՒՄ Է ԿՈՄԵՐԺԻՈՆ ԿԺՈՐԴԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հունիսի 13-ին, Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու նախագահությամբ, անցկացվեց երկրի գործադիր իշխանության հերթական նիստը:

Նիստի մեկնարկին՝ Գիորգի Կվիրիկաշվիլին խոսեց մեկ տարվա վաղեմությամբ Թբիլիսիում տեղի ունեցած տարերային աղետի հետեւանքների վերացման ուղղությամբ կատարված աշխատանքների մասին, աղետ, որի զոհ դարձավ 21 մարդ, եւս երկուսը մինչ օրս համարվում են անհայտ կորած:

Անդրադառնալով էկոնոմիկայի թեմային՝ վարչապետը կառավարության նիստում նշեց, որ ընթացիկ տարվա առաջին եռամսյակում վավերացվել է անմիջական օտարերկրյա ներդրումների ռեկորդային աճ: Նրա խոսքերով, նման ցուցանիշ առաջին անգամ վավերացվել է 2008 թվականից հետո: Այդ ցուցանիշը կազմել է 376 միլիոն: Ներդրումներ են կատարվել հիմնականում տրանսպորտի եւ կապի ոլորտներում, ինչպես նաեւ ֆինանսական սեկտորում եւ էներգետիկայում»,- հայ-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԱՅՑ

ՍՈՉԱՐ ՍՈՒԲԱՐԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Վրաստանի փախստականների եւ վերաբնակեցման գործերով նախարար Սոզար Սուբարին եւ փոխնախարար Գոգի Փացացիան գտնվում էին Երեւանում, Աբխազիայի դե-ֆակտո կառավարության ներկայացուցիչների հետ բանակցությունների անցկացման համար:

Ինչպես նշեցին գերատեսչությունում, այցի նպատակն էր Աբխազիայում պատերազմի ժամանակ զոհվածների աճյունների որոնման եւ վերահուղարկավորման հարցի քննարկումը:

Բանակցությունները անցկացվում էին Միջազգային Կարմիր խաչի հովանու ներքո:

ՏԵՍԱԿԵՏ

«ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀԵՏՈ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ ՄՆԱԼՈՒ ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՉԿԱ»

Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, արձագանքելով հունիսի 13-ին տարածված այն տեղեկատվությանը, որի համաձայն, ընտրություններից հետո հնարավոր է, նրան ընտրեն խորհրդարանի նախագահ, իսկ Դմիտրի Քումսիշվիլում՝ վարչապետ, հայտարարեց, որ ընտրություններից հետո ինքը մտադիր չէ մնալ խորհրդարանում:

«Երեկ այդ հարցի կապակցությամբ աղմուկ է բարձրացել: Ես մտադիր չեմ մնալ խորհրդարանում: Դա բացառված է: Ես մտադիր եմ մնալ նույն այն պաշտոնում, որն այսօր զբաղեցնում եմ, որովհետեւ մեզ հարկավոր է բազմաթիվ կարեւոր գործեր անել»,- լրագրողների հետ հանդիպմանը հայտարարեց Գիորգի Կվիրիկաշվիլին:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԿԱԽԱ ԿԱԽԻՇՎԻԼԻՆ ՀԱՆԴԻՊԵՑ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՏ

Քրեա-կատարողական եւ պրոբացիայի նախարար Կախա Կախիշվիլին հանդիպում ունեցավ ժողովրդական պաշտան Ուչա Նանուաշվիլու եւ օմբուդսմենին առընթեր ազգային փոքրամասնությունների խորհրդի անդամների հետ:

Հանդիպմանը ներկա էին նաեւ քրեա-կատարողական եւ պրոբացիայի նախարարի առաջին տեղակալը, դեպարտամենտի ղեկավարները, ժողովրդական պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները:

«Բավականին թվով

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ԲԱԹՈՒՄԻՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍԻ ՀՐԱԺԵՇՏԻ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ

Բաթումիում Հայաստանի գլխավոր հյուպատոս Արամ Գրիգորյանը իր դիվանագիտական առաքելությունը ավարտելու կապակցությամբ, հրաժեշտի հանդիպումներ է ունեցել Աջարիայի Ինքնավար Հանրապետության կառավարության ղեկավար Արչիլ Խաբաձեի, Գերագույն խորհրդի նախագահ Ավթանդիլ Բերիձեի հետ:

Հյուպատոսը հանդիպումներ է ունեցել նաեւ Բաթումիի քաղաքապետ Գիորգի Երմակովի, կրթության, մշակույթի ու սպորտի նախարար Գիորգի Թավամաիշվիլու, առողջապահության ու սոցիալական հարցերի նախարար Նուգզար Սուրմանիձեի, գյուղատնտեսության նախարար Զաուր Փուլկարաձեի, գլխավոր դատախազ Գիորգի Մոսաշվիլու, կրթության, մշակույթի ու սպորտի նախարար Թավամաիշվիլու հետ:

Հայաստանի գլխավոր հյուպատոս Արամ Գրիգորյանն արդյունավետ աշխատանքի եւ փոխշահավետ համագործակցության համար Ինքնավար Հանրապետության կառավարության ղեկավար Արչիլ Խաբաձեի կողմից պարգեւատրվել է Աջարիայի կառավարության շնորհակալագրով:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏ

ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՍՏԵՂԾՎՈՒՄ Է ԿՈՄԵՐՑԻՈՆ ԿՑՈՐԴԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

տարարեց վարչապետը:

Շարունակելով թեման՝ Գիորգի Կվիրիկաշվիլին նշեց, որ որոշում է ընդունվել հիմնել կոմերցիոն կցորդի ինստիտուտ: «Այսօր դիվանագիտական ծառայության մասին օրենքում» կկատարվեն փոփոխություններ: Մենք հիմնում ենք տնտեսական կցորդի, կոմերցիոն կցորդի ինստիտուտ: Դա կարեւոր փոփոխություն է, որը կնպաստի արտահանմանը, առեւտրի զարգացմանը, եւ բոլոր երկրներում, որոնք այդ առումով կլինեն ակտիվ, որտեղ կվավերացվի ծավալուն առեւտրաշրջանառություն, կլինեն Վրաստանի առեւտրական ներկայացուցիչները: Նրանք այդ երկրներում կաջակցեն վրաց արտահանողներին եւ կներկայացնեն երկրի կառավարությունն այդ ուղղությամբ ընկերություններին ցուցադրվող օգնության գործում: Մեզ համար առավել հրատապն արտահանումն է, թեպետ ոչ պակաս կարեւոր նշանակություն ունի նաեւ ներկրումը: Այն նոր աշխատատեղեր է ստեղծում»,- հայտարարեց Գիորգի Կվիրիկաշվիլին եւ համապատասխան գերատեսչություններին կոչ արեց առավելագույնս արագացնել կոմերցիոն կցորդի ինստիտուտի ստեղծման հետ կապված գործընթացը:

Ինչպես նշեց Վրաստանի էկոնոմիկայի նախարար Դմիտրի Քումսիշվիլին, կոմերցիոն կցորդին հրամանագրով նշանակելու է էկոնոմիկայի նախարարը՝ արտաքին գործերի նախարարի հետ պայմանավորվածությամբ: Նրա խոսքերով, նշանակված կցորդը կարող է միաժամանակ գործել մեկ կամ մի քանի երկրներում, եւ նրա գլխավոր գործառույթը արտահանման խրախուսումն է, ներդրումների գրավումը եւ տեղում գործող վրացական գործարարության պաշտպանությունը:

ՎՐԱՍՏԱՆ-ԳԵՐՄԱՆԻԱ

ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆԸ ԱՆՀԱՄԲԵՐՈՒԹՅԱՄԲ ՍՊԱՍՈՒՄ Է ԱՆԱՅՑԵԳՐԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆԸ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

հանդիպմանը, կողմերը քննարկեցին Եվրամիությանը Վրաստանի ինտեգրման, անայցեգրային պայմանակարգի հաստատման եւ տարածաշրջանում ստեղծված իրավիճակին առնչվող հարցեր: Հանդիպումից հետո անցկացված համատեղ մամլո ասուլիսում, Գիորգի Կվիրիկաշվիլին նշեց, որ Վրաստանը հաստատակամորեն կանգնած է Եվրամիության եւ ՆԱՏՕ-ի հետ հարաբերությունների խորացման ճանապարհին ու հետեւողականորեն շարունակում է այդ կուրսը: «Մենք նշանակալի առաջընթացի հասանք Ասոցիացման համաձայնագրի կատարման ուղղությամբ եւ սպասում ենք անայցեգրային պայմանակարգի հաստատմանը: Մենք անհամբերությամբ սպասում ենք դրան»,- հայտարարեց Գիորգի Կվիրիկաշվիլին:

Իր հերթին, Անգելա Մերկելը հավաստիացրեց, որ Գերմանիան հնարավոր ամեն ինչ կանի անայցեգրային պայմանակարգի ընդունման գործընթացի արագացման համար: «Մենք հաշվի ենք առնում եվրահանձնաժողովի եզրակացությունը, որտեղ նշված է, որ Վրաստանը կատարել է անայցեգրային պայմանակարգի համար անհրաժեշտ բոլոր չափորոշիչները: Բնականաբար, Գերմանիան այդ հանձնարարականների դեմ չի արտահայտվի»,- նշեց Գերմանիայի կանցլերը եւ հավելեց. «Իսկ ինչ վերաբերում է ՆԱՏՕ-ին, ապա մենք Վրաստանի համար կազմել ենք հատուկ փաթեթ: Վարշավայում մենք կխոսենք այն մասին, թե լրացուցիչ ինչ հնարավորություններ կան ՆԱՏՕ-Վրաստան համագործակցության փաթեթի շրջանակներում: Դրանով հիանալի հիմք կդրվի ՆԱՏՕ-Վրաստան հարաբերությունների խորացման համար»:

Անդրադառնալով Ռուսաստանի հետ հարաբերությունների թեմային՝ Դաշնային կանցլերը նշեց, որ Գերմանիայի կառավարությունը ողջունում է Վրաստանի իշխանությունների «պրագմատիկ քայլերը» Ռուսաստանի հետ երկխոսությունում, բայց շարունակում է հանդես գալ հօգուտ երկրի տարածքային ամբողջականության պահպանման: «Մենք ուրախ ենք, որ Վրաստանը պրագմատիկ քայլեր է անում Ռուսաստանի հետ միասին, բայց մենք ԳՖՀ-ում հանդես ենք գալիս Վրաստանի տարածքային ամբողջականության պահպանման օգտին: Դրան, իհարկե, առնչվում է Հարավային Օսեթիայի եւ Աբխազիայի հարցը: Այդ մասին մենք նույնպես խոսեցինք»,- ասաց Անգելա Մերկելը:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 8-ԻՆ՝ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆՈՐԱՑՎՈՒՄ Է ՄԻԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱՑՈՒՑԱԿԸ

Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը նորացրել է միասնական ընտրացուցակը: Ինչպես տեղեկացրին ԿԸՀ-ից, ցանկացած քաղաքացի իր տվյալները կարող է ստուգել հատուկ voters.cec.gov.ge կայք-էջում:

Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի տվյալներով, երկրի ընտրողների ցուցակում գրանցվել է 3473316 մարդ: ԿԸՀ-ն ընտրացուցակը կազմել է այն տվյալների հիման վրա, որոնք յուրաքանչյուր եռամսյակ ներկայացնում են համապատասխան գերատեսչությունները, մասնավորապես, արդարադատության նախարարության պետական սպասարկումների զարգացման գործակալությունը: Վերջնական ընտրացուցակը ԿԸՀ-ն կհրապարակի հոկտեմբերի 3-ին, ընտրություններից հինգ օր շուտ:

Ինչպես տեղեկացրել է ԿԸՀ-ն, հունիսի 15-ի դրությամբ, հոկտեմբերի 8-ին անցկացվելիք խորհրդարանական ընտրությունների համար մասնակցության հայտ ներկայացրած 34 սուբյեկտներից գրանցվել է 9-ը: ԿԸՀ-ի տվյալներով, խորհրդարանական ընտրություններին կմասնակցեն «Միասնական ազգային շարժումը», «Ազատ ժողովրդավարները», «Միացյալ ժողովրդավարական շարժումը», «Վրաստանի հայրենասերների դաշինքը», «Ժողովրդական իշխանությունը», «Վրաստանը խաղաղության համար», «Արդարության վերականգնման միությունը», «Ժողովրդի ձայն. Աստված մեր ճշմարիտը», «Վրաստանի կոմունիստական կուսակցությունը», «Վրաստանը»:

Կառավարող «Վրացական երազանք» կան կուսակցությունը», «Վրաստանը»:

Կառավարող «Վրացական երազանք» ժողովրդավարական Վրաստան» կուսակցությունից դեռեւս հայտ չի ներկայացվել:

Նշենք, որ խորհրդարանում իր ներկայացուցիչներն ունեցող կուսակցությունները հայտ կարող են ներկայացնել ընտրություններից 57 օր շուտ:

Խորհրդարանական ներկայացուցիչ չունեցող ներկայացուցիչները մինչեւ օգոստոսի 15-ը ԿԸՀ-ին ներկայացնելու են 25 հազար ընտրողի ցուցակը: Այն դեպքում, եթե կուսակցությունը 2014 թ-ի տեղական ընտրությունների արդյունքում իր ներկայացուցիչն ունի տեղական ինքնակառավարման մարմնում, ապա ներկայացնելու է հազար ընտրողի ցուցակը:



ԱՄՆ ԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ՕՌԼԱՆԴՈՅՈՒՄ

ԱՄՆ-ի Ֆլորիդայի նահանգի Օռլանդո քաղաքի ոչ ավանդական սեռական կողմնորոշման անձանց գիշերային ակումբի վրա կատարված զինված հարձակումը 50 մարդու կյանք է խլել եւ, իշխանությունների տվյալներով, մարդկանց զանգվածային գնդակահարման ամենաարյունալի դեպքն է ԱՄՆ-ի նորագույն պատմության մեջ:

Հարձակվողի անձն արդեն պարզված է: Նա 29-ամյա ամերիկացի Օմար Մատինն է, որի ծնողները Աֆղանստանից են սերված:

Կարգի պահապանները պատահարի վայր են ժամանել հաստատության վրա հարձակման վերաբերյալ տեղեկատվության հայտնվելուց արդեն մի քանի րոպե անց, գնդակահարել Մատինին եւ ազատել շուրջ 30 այցելուի:

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ ՎԵՏՈ՝ ԵՎՐԱԲԱՆԱԿԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՎՐԱ

Մեծ Բրիտանիան հաստատուն վետո է դրել Եվրոպական բանակի ստեղծման հեռանկարների վրա: Այդ մասին հայտարարել է Միացյալ Թագավորության պաշտպանության նախարար Մայքլ Ֆելոնը:

Եվրամիության զինված ուժերի ստեղծման պաշտպանությամբ, ավելի վաղ հանդես են եկել Եվրահանձնաժողովի նախագահ Ժան Կլոդ Յունկերը եւ Եվրախորհրդարանի պատգամավորները:

ԹՈՒՐՔԻԱ ՀԵՏԱՁԳՎՈՒՄ Է ԵՄ ԱՌԱՆՑ ՎԻԶԱՅԻ ՌԵԺԻՄԸ

Թուրքիան մինչ հիմա չի կատարել Եվրամիության հետ վիզային ռեժիմի ազատականացման համար Բրյուսելի կողմից առաջ քաշված բոլոր անհրաժեշտ պայմանները: Այս մասին հայտարարել է ներքին գործերով եւ միգրացիայի հարցերով եվրահանձնակատար Դիմիտրիս Ավրամոպուլոսը:

Նա նշել է, որ վիզային ռեժիմի ազատականացումը կախված է ինչպես Թուրքիայի պարտավորությունների կատարման ժամկետից, այնպես էլ՝ այն բանից, թե երբ ԵՄ-ն ու Եվրախորհրդարանը համաձայնություն կտան դրան:

Թուրքիայի նախագահ Էրդողանը բազմիցս հայտարարել է, որ եթե ԵՄ-ն պահպանի վիզային ռեժիմը, ապա Անկարան կարող է չեղարկել փախստականների մասին համաձայնությունը:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ԲԻՁԻՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼԻ. «ԵՍ ԲԱՑԱՌՈՒՄ ԵՄ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԻՄ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ»

Հունիսի 14-ին Վրաստանի նախկին վարչապետ, «Վրացական երազանք» կուսակցության հիմնադիր Բիձինա Իվանիշվիլին հրավիրեց հատուկ մամլո ասուլիս, որի ընթացքում խոսեց երկրի ընթացիկ իրավիճակի մասին եւ ներկայացրեց առաջիկայի իր ծրագրերը:

Մասնավորապես, նա բացառեց իր քաղաքականություն վերադառնալու հնարավորությունը՝ նշելով. «Դե', իհարկե, ես բացառում եմ ընտրություններին իմ մասնակցությունը: Դրա անհրաժեշտությունը չկա, նույնիսկ ապագայում դա հնարավոր չեմ համարում»:

Նախկին վարչապետը հավելեց, որ ակտիվորեն մասնակցում է «Վրացական երազանքի» նախընտրական արշավին, քանի որ դա իր «քաղաքացիական պարտքն է»: «Դա սովորական քաղաքացիական պատասխանատվություն է: Ես ցանկանում եմ օգտագործել իմ հնարավորությունները, որպեսզի ներդրում ունենամ երկրի զարգացման գործում»,- ասաց նա:

Անդրադառնալով հոկտեմբերի 8-ին անցկացվելիք խորհրդարանական ընտրություններին՝ Վրաստանի նախկին վարչապետն ասաց, որ, եթե «Վրացական երազանք-Դեմոկրատական Վրաստան» կուսակցությունը մեծամասնություն չստանա, ապա երկրում հիմնախնդիրներ կծագեն:

«Մենք կոալիցիոն կառավարություն ունեինք, եւ իմ անձը հավասարակշռում էր իրադրությունը: Բայց եթե նոր պայմաններում եւ նոր ընտրություններում «Վրացական երազանքը» 80-ից պակաս տեղ ստանա, ապա տնտեսական բարեփոխումների անցկացումը կբարդանա: Եթե կրկին ձեւավորվի կոալիցիոն կառավարություն, ապա մենք բազմաթիվ նոր խնդիրներ կստանանք»,- հայտարարեց Բիձինա Իվանիշվիլին:

Նրա խոսքերով, կոալիցիոն կառավարության դեպքում, դրա մեջ մտնող ուժերը հիմնականում հոգ են տանում ռեսուրսների բաշխման մասին, իսկ կարեւոր բարեփոխումները մնում են առանց ուշադրության:

«Այդուամենայնիվ, ես դեմ չեմ կոալիցիոն կառավարությանը: Սակայն, այս տնտեսության եւ փոքր ֆինանսների պայմաններում, ինչպես մեզ մոտ է, շատ դժվար կլինի, եւ դա կխանգարի ճիշտ ուղղությամբ Վրաստանի զարգացմանը»,- նշեց նա:

Մեկնաբանելով առաջիկա ընտրություններում գլխավոր մրցակցի՝ «Միասնական ազգային շարժում» կուսակցության հեռանկարները՝ Բիձինա Իվանիշվիլին ասաց, որ այն աճելու հեռանկարներ չունի: Այդ կուսակցության համար, որի ոչ պաշտոնական առաջնորդը համարվում է Վրաստանի նախկին նախագահ Միխեիլ Սաակաշվիլին, դժվար կլինի հաղթահարել ընտրական արգելքը, կարծում է Իվանիշվիլին:

ԱՎԹԱՆԴԻԼ ՕԹԻՆԱՇՎԻԼԻ

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԱՅՑ

ՍՈՖԻ ԼՈՐԵՆԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Իտալացի լեգենդար դերասանուհի Սոֆի Լորենը առաջին անգամ ժամանել է Վրաստան: Դերասանուհին պատվավոր հյուրի կարգավիճակով կմասնակցի վրաց օպերային երգչուհի Նինո Սուրգուլաձեի «Երազանքի ծառ» բարեգործական հիմնադրամի միջոցառումներին:

Այցի շրջանակներում, Սոֆի Լորենը հանդիպումներ կունենա Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդի եւ երկրի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու հետ:

Նա հունիսի 15-ին, Թբիլիսիի օպերայի եւ բալետի թատրոնում պատվավոր հյուրի կարգավիճակով, մասնակցեց Վրաստանի օպերային երգչուհի Նինո Սուրգուլաձեի «Ցանկության ծառ» բարեգործական հիմնադրամի միջոցառումներին:

Հանրահայտ դերասանուհին եղավ նաեւ «Հանուն սիրո» նոր ներկայացման համաշխարհային պրեմիերային: Ներկայացմանը նվագախումբը գլխավորում էր Սոֆի Լորենի որդին՝ դիրիժոր Կարլո Պոնտի-կրտսերը:

Նշենք, որ ներկայացման շուրջ իտալացի բեմադրիչի հետ միասին աշխատել են Նինո Սուրգուլաձեն, բալետի աստղ Նինո Անանիաշվիլին եւ թատրոնի բալետային խումբը:

Ներկայացման պրեմիերաները կանցկացվեն նաեւ հունիսի 17-ին եւ 19-ին:

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԵՐԿԿՈՂՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐՆ ԷԻՆ

Հունիսի 15-ին Վրաստանի ֆինանսների նախարար Նոդար Խադուրին հանդիպում ունեցավ զարգացման Ասիական բանկի՝ Վրաստանի տարածքը ներառող, ավստրալիական խմբի գործադիր տնօրեն Մետյու Ֆոքսի հետ:

Հանդիպմանը կողմերը քննարկեցին երկկողմ համագործակցության զարգացման հեռանկարները այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են ենթակառույցը, էներգետիկան, ջրամատակարարումը, կապիտալի շուկայի զարգացումը:

Ինչպես նշվեց հանդիպմանը, զարգացման Ասիական բանկը պատրաստ է շարունակել արգասաբեր համագործակցությունը Վրաստանի հետ եւ ավելացնել այնպիսի ենթակառույցային նախագծերի ֆինանսավորումը, որոնք ապահովում են երկրի զարգացումն ու տնտեսական աճը:

Մետյու Ֆոքսը վրացական կողմին շնորհակալություն հայտնեց արգասաբեր եւ հետաքրքիր այցի կազմակերպման համար եւ Վրաստանի ֆինանսների նախարարին հրավիրեց վերակառուցման եւ զարգացման Ասիական բանկի Մանիլում գտնվող գլխավոր գրասենյակ:

ԴԱՏԱԿԱՆ

ԹԵԱ ԾՈՒԼՈՒԿԻԱՆԻ. «ՍՏՐԱՍԲՈՒՐԳԻ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՄԵՐԱԲԻՇՎԻԼՈՒ ՀԱՄԱՐ ԲԱՆՏԻ ԴՌՆԵՐԸ ՉԻ ԲԱՑՈՒՄ»

ՀՐԱՊԱՐԱԿՎԵՑ ՎԱՆՈ ՄԵՐԱԲԻՇՎԻԼՈՒ ԳՈՐԾՈՎ ՍՏՐԱՍԲՈՒՐԳԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Հունիսի 14-ին Ստրասբուրգի՝ մարդու իրավունքների հարցով Եվրոպական դատարանը հրապարակեց որոշում Վրաստանի նախկին վարչապետ Վանո Մերաբիշվիլու գործով:

Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին, մեկնաբանելով Ստրասբուրգի դատարանի Վրաստանի նախկին վարչապետ Վանո Մերաբիշվիլու գործով ընդունած որոշումը, հայտարարեց, որ Մերաբիշվիլու բանտարկության հարցի վերանայում չի լինի: Նախարարի հավաստմամբ, մարդու իրավունքների Ստրասբուրգի դատարանն իր որոշման մեջ նշեց այն, «ինչը կարեւոր է մեզ՝ որպես դատական կողմ»: «Մենք շահագրգռված էինք, որպեսզի Ստրասբուրգում ասվեր, որ առաջին խափանման միջոցը, որը սահմանվել էր առաջին քրեական գործով, օրինական էր: Եվ որպես դատական կողմ՝ մենք այդ նպատակին հասանք»,- հայտարարեց Թեա Ծուլուկիանին եւ հավելեց. «Ստրասբուրգի դատարանի որոշումը չի բացում մայիսի 26-ի, Գիրգվլիանու սպանության եւ շահարկումների համար դատապարտված Վանո Մերաբիշվիլու առջեւ բանտի դռները»: «Նրա վաղաժամկետ ազատ արձակումը չի ծրագրվում»,- ընդգծեց արդարադատության նախարարը:

Իսկ Վանո Մերաբիշվիլու փաստաբան Օթար Կախիձեն, որոշումը համարում է մեծ հաղթանակ: «Սա յոթերորդ գործն է եւ բացառիկ երեւույթ»,- ասաց փաստաբանը եւ հավելեց. «Վանո Մերաբիշվիլին երրորդ քաղաքացետն է Յուլյա Տիմոշենկոյից եւ Լյուցենկոյից հետո, ում կապակցությամբ սահմանվել է 18-րդ հոդվածի խախտում: Մերաբիշվիլու արգելափակումն անհիմն էր, անհիմն էր նաեւ նրա պատժաժամկետի երկարաձգումը եւ, ամենակարեւորը, Մերաբիշվիլու ձերբակալությունը, նրա քաղաքական հետապնդումը չէին ծառայում կոնվենցիայով նախատեսված նպատակներին»:



ԴՄԻՏՐԻ ՔՈՒՄՍԻՇՎԻԼԻՆ՝ ԱՌԱՋԻՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին ստորագրել է հրամանագիր, ըստ որի, էկոնոմիկայի նախարար, փոխվարչապետ Դմիտրի Քումսիշվիլին նշանակվում է վարչապետի առաջին տեղակալ:

Մինչ օրս, նախարարների կաբինետում սահմանված էր փոխվարչապետի երկու պաշտոն, որոնք զբաղեցնում էին Դմիտրի Քումսիշվիլին եւ Կախի Կալաձեն:

ՎԱՆՈ ՄԱՃԱՎԱՐԻԱՆԻՆ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին իր նախկին խորհրդական, փորձագետ Վանո Մաճավարիանուն նշանակեց Վրաստանի ազգային անվտանգության խորհրդի նախագահի տեղակալ:

ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԱՑԱՎ ՀԱՄԱՆԵՐՄԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆԸ

Հունիսի 10-ին Վրաստանի խորհրդարանը պաշտպանեց համաներման մասին ազգային ֆորումի նախաձեռնությունը: Ներկայացված նախագիծն ընդունվեց առաջին ընթերցմամբ, միաձայն:

Նախաձեռնությունը նախատեսում է քրեական պատասխանատվությունից եւ պատժամիջոցից ազատել 70 եւ ավելի տարեկան տղամարդկանց ու 65 եւ ավելի տարիքի կանանց:

Ազգային ֆորումի տվյալներով, օրինանախագծի ընդունման դեպքում, քրեական պատասխանատվությունից կազատվի եւ բանտից ազատ կարձակվի 116 մարդ:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԿԱԽԱ ԿԱԽԻՇՎԻԼԻՆ ՀԱՆԴԻՊԵՑ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՏ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ազգային եւ կրոնական վոքրամասնությունների ներկայացուցիչներ ունենք բանտարկված: Մենք մշտապես տեղեկատվություն ենք ստանում հաստատություններից, համայնքներից, սակայն լավ կլինի, եթե ազգային փոքրամասնությունների խորհրդի անդամներից տեղեկանանք, թե ինչ հիմնախնդիրներ կան, որպեսզի կարողանանք դրանք կարգավորել»,- հանդիպմանը հայտարարեց Կախա Կախիշվիլին:

Ինչպես նշեց նախարարը, պենիտենցիալ հաստատություններում գտնվող օտարերկրյա քաղաքացիություն ունեցող ազգային փոքրամասնությունների բանտարկյալները ստանում են բոլոր այն սպասարկումները, որոնք համապատասխանում են նրանց կողմից պատժաժամկետով նախատեսված պայմաններին:

Ժողովրդական պաշտպան Ուչա Նանուաշվիլու հայտարարությամբ, ողջունելի է, որ ազգային փոքրամասնությունների խորհրդի անդամներին տրվել է անմիջականորեն նախարարին հարցեր առաջադրելու եւ այնպիսի հարցեր բարձրացնելու հնարավորություն, որոնք անհանգստություն են պատճառում հասարակայնությանը: Ինչպես հայտարարեցին հանդիպմանը մասնակից «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, ոչ կառավարական «Բազմազգ Վրաստան» կազմակերպության նախագահ Առնոլդ Ստեփանյանը, Վրաստանի հայերի միության նախագահ Հենրիխ Մուրադյանը, ազգային փոքրամասնությունների խորհուրդը նախարարի կողմից ստացավ առաջադրված բոլոր նախաձեռնությունների աջակցությունը:

Կախա Կախիշվիլու հայտարարությամբ, լեզվական արգելքի վերացման նպատակով, ոչ վրաց բանտարկյալների համար գործում են վրաց լեզվի ուսուցման դասընթացներ: Բացի այդ, օտարերկրյա քաղաքացիություն ունեցող եւ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ բանտարկյալները ներգրավված են հոգեբանական վերականգնողական ծրագրերում, նրանց համար տարվում են նաեւ մասնագիտական եւ հանրակրթական դասընթացներ:

Նախարարության իրավաբանական դեպարտամենտի ղեկավարը հանդիպման մասնակիցներին տեղեկատվություն հաղորդեց այն սպասարկումների մասին, որոնք տրվում են ազգային փոքրամասնության ներկայացուցիչներին Վրաստանի պենիտենցիալ հաստատություններում: Մասնավորապես, ոչ վրաց բանտարկյալները ապահովված են բանավոր, գրավոր եւ սինխրոն թարգմանության սպասարկմամբ, նաեւ փաստաթղթերի նոտարական հաստատման սպասարկմամբ: Պենիտենցիալ հաստատություններում գտնվող անձանց հինգ լեզվով (ռուսերեն, հայերեն, թուրքերեն, ադրբեջաներեն եւ անգլերեն) տրվում են բրոշյուրներ մեղադրյալների եւ բանտարկյալների իրավունքների վերաբերյալ: Ռուսալեզու բանտարկյալների համար պենիտենցիալ հաստատությունում մատչելի է ռուս-վրացական իրավաբանական տերմինների բացատրական բառարանը: Պենիտենցիալ հաստատություններում գտնվող օտարերկրյա քաղաքացիներին, շաբաթվա որոշակի օրերին տրվել է միջազգային կոդից օգտվելու եւ արտասահման զանգելու իրավունք: Բացի այդ, քրեա-կատարողական եւ պրոբացիայի նախարարությունը հայ եւ վրաց բանտարկյալների համար ապահովում է իրենց մայրենի լեզվով լույս տեսնող թերթերի մատակարարումը: Պենիտենցիալ հաստատությունում գտնվող թուրք եւ ռուս բանտարկյալների համար ապահովվել է իրենց մայրենի լեզվով հեռուստատեսային ալիքները դիտելու հնարավորություն:

Նախարարի նախաձեռնությամբ, օմբուդսմենին առընթեր ազգային փոքրամասնությունների խորհրդի անդամների հետ հանդիպումները կանցկացվեն պարբերաբար, երկու ամիսը մեկ անգամ:

ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ

ԲՈԼՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՄԵԾԱԳՈՒՅՆ ՀԱՅ ԾԱՆՐՈՐԴԸ, ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՍՊԱՆԸ 60 ՏԱՐԵԿԱՆ Է

Աշխարհահռչակ ծանրորդ Յուրի Վարդանյանը վաթսուն տարեկան է: Հավատս չի գալիս: Կարծես երեկ էր, որ նա մեկը մյուսի հետեւից համաշխարհային ռեկորդներ էր սահմանում, նվաճում աշխարհի եւ Եվրոպայի առաջնության հերթական ոսկե մեդալը: Նա, հիրավի, հայ ժողովրդի սիրելին էր, նաեւ կուռքը: Ուղիղ տասը տարի՝ 1975-1985 թվականներին, Յուրի Վարդանյանը կարծես մրցահարթակ էր բարձրանում՝ չեմպիոնի հերթական ոսկե մեդալը ստանալու կամ համաշխարհային ռեկորդ սահմանելու: Հայ լեգենդար ծանրամարտիկը, որին իրավամբ կարելի է համարել բոլոր ժամանակների հայ մեծագույն ծանրորդը, 7 անգամ դարձել է աշխարհի, 5 անգամ՝ Եվրոպայի, 4 անգամ՝ Խորհրդային Միության ու նաեւ 1980 թվականին՝ Օլիմպիական չեմպիոն: Այդ առաջնություններում նա սահմանել է 43 համաշխարհային ռեկորդ, նվաճել՝ 111 ոսկե մեդալ: Դուք կարո՞ղ եք պատկերացնել Յուրիին՝ այդ բոլոր մեդալները կրծքին կախած: Երեւի, նա չկարողանար տեղից շարժվել՝ չնայած ունեցած ֆենոմենալ ուժին...

Ծնվել է 1956 թվականի հունիսի 13-ին, Լենինականում (Գյումրի): Մանկուց սիրել է սպորտը՝ միանգամից զբաղվելով մի քանի մարզաձեւով: Նրան ճանաչողներն ասում են, որ Յուրին կարող էր հաջողակ ըմբիշ կամ բռնցքամարտիկ, թեթեւատլետ դառնալ: Տղան երկընտրանքի մեջ էր՝ ո՞ր մարզաձեւն ընտրել: Ի վերջո, հաղթեց ծանրամարտը: Եվ դրանում իրենց «մեղքի» բաժինն ունեին երկու մարդ. հորեղբայրը՝ ծանրամարտի մարզիչ Սերգեյը եւ աշխարհահռչակ ծանրորդ Դավիդ Ռիգերտը:

Ինչ իմանար Յուրին, որ տարիներ անց ինքը ոչ միայն կծանոթանա իր կուռքի հետ, այլեւ նրա կողքին հանդես կգա Խորհրդային Միության ազգային հավաքականի կազմում, ավելին՝ նույնիսկ կգերազանցի նրա համաշխարհային ռեկորդը, որ տարիներ շարունակ անսասան էր մնում: Դա, իհարկե, հետո պիտի լինի: Իսկ մինչ այդ...

Յուրին ծանրամարտով սկսել է պարապել 1970 թվականից, երբ նոր էր բոլորել 14 տարին: Արտակարգ ոչնչով աչքի չէր ընկնում, գուցե միայն՝ աշխատասիրությամբ: Մարզչի կանխատեսումներն ի կատար ածվեցին 1975 թվականին, երբ Յուրին առաջին անգամ Մարսելում մասնակցեց աշխարհի ու Եվրոպայի երիտասարդական առաջնությանը: Նվաճեց հողագնդի չեմպիոնի ոսկե մեդալը:

Մասնագետները հմտզվեցին, որ համաշխարհային ծանրամարտի երկնակամարում նոր աստղ է փայլատակել: Սակայն, նա դեռ ընդամենը աստղիկ էր: 1976 թվականին Յուրի Վարդանյանը բոլոր հիմքերն ուներ մեկնելու Մոնրեալ՝ հերթական Օլիմպիական խաղերին... Բայց... Օլիմպիական խաղերին մասնակցելու առումով նրա բախտը չբերեց:

Նախ, երիտասարդ տարիքը հաշվի առնելով՝ նրան զրկում են օլիմպիադա մեկնելու հնարավորությունից, հետո, ինչ-ինչ քաղաքական խաղերի պատճառով, խորհրդային մարզիկները չեն մեկնում Օլիմպիական խաղերին մասնակցելու: Բայց չէ՞ որ տարիներն իզուր են անցնում: Այո, 1976 թվականին քսանամյա Յուրիին չեն ընդգրկում Մոնրեալ մեկնող ԽՍՀՄ հավաքականի կազմում: Միակ սփոփանքը թերեւս այն էր, որ այդ քաշում Խորհրդային Միությունը ներկայացնելու էր մեկ այլ լենինականցի, նույն Սերգեյ Վարդանյանի նախկին սանը՝ Վարդան Միլիտոսյանը: ԽՍՀՄ հավաքականի մարզիչների այդ դիրքորոշումը, ավելին՝ կասեի անհեռատեսությունը, հունից հանեց Սերգեյ Վարդանյանին: Այն ժամանակ Վարդանյանները որոշեցին Լենինականում «մինի Մոնրեալ» կազմակերպել: Այն օրը, երբ օվկիանոսի անդին մրցահարթակ էին դուրս եկել կիսամիջին քաշի ծանրորդները, նույն պահին Լենինականում մրցահարթակ բարձրացավ նաեւ Յուրի Վարդանյանը:



Կարո՞ղ եք կռահել, թե ինչ ավարտ ունեցավ այդ հեռակա մենամարտը: Դժվար թե կռահեք: Օգնեմ: Մոնրեալում Օլիմպիական չեմպիոն հռչակվեց բուլղարացի մարզիկ Յորդան Միտկովը, իսկ երկրորդ տեղը գրավեց Վարդան Միլիտոսյանը: Օլիմպիական չեմպիոնը երկամարտում հավաքել էր 335 կգ, իսկ արծաթե մեդալակիր լենինականցի մարզիկը՝ 330 կգ: Իսկ Լենինականում ԽՍՀՄ հավաքականի մարզիչների վստահությանը չարժանացած քսանամյա Յուրի Վարդանյանը 7,5 կիլոգրամով ավելի էր բարձրացրել, քան օլիմպիական չեմպիոնը: Իսկ երկու լենինականցիների հեռակա մրցավեճում Յուրին գերազանցել էր 12,5 կիլոգրամով: Դա դեռ ամենը չէր: Յուրին, մրցելով ինքն իր ու ծանրածողի հետ, սահմանել էր երկու համաշխարհային ռեկորդ: Բնական է, որ դրանք, որպես այդպիսիք, չգրանցվեցին: Մրցումների մակարդակն այն չէր...

Որոշ ժամանակ անց, ԽՍՀՄ գավաթի խաղարկության մրցումներում Յուրի Վարդանյանը կրկնեց Լենինականում ցույց տված արդյունքը, եւ համաշխարհային ռեկորդները գրանցվեցին նրա անունով:

1976 թվականին Յուրի Վարդանյանը երկրորդ անգամ դարձավ աշխարհի եւ Եվրոպայի երիտասարդների չեմպիոն: 1977 թվականին առաջին անգամ հաղթեց ԽՍՀՄ մեծահասակների առաջնությունում՝ սահմանելով համաշխարհային նոր ռեկորդ: Այս անգամ արդեն Յուրիին չէին կարող չընդգրկել երկրի հավաքականի կազմում, որը մեկնելու էր գերմանական Շտուտգարդ քաղաքում կայանալիք աշխարհի հերթական առաջնությանը: Ինչպես միշտ, այս անգամ էլ Յուրին հուսախաբ չարեց իր հազարավոր երկրպագուներին՝ պարգեւատրվեց ոսկե մեդալով: Նա արդեն զգացել էր համաշխարհային ռեկորդների համը: Հանդես գալով մինչեւ 75 կգ քաշային կարգում՝ լենինականցի դյուցազնը երկամարտում հավաքեց 345 կգ, ինչը համաշխարհային նոր ռեկորդ էր: Այդպիսով, Յուրի Վարդանյանը դարձավ առաջին հայաստանցի ծանրորդը, ում հաջողվել էր դառնալ աշխարհի չեմպիոն: Մենք հետո էինք ունենալու աշխարհի եւ Եվրոպայի չեմպիոններ, անգամ՝ Օլիմպիական խաղերի հաղթող: Բայց 1977-ին այդպիսիք չկային: Յուրի Վարդանյանն առաջինն էր...

Նրա աստեղային ժամը եկավ 1980 թվականին՝ Մոսկվայի օլիմպիական խաղերի ժամանակ: Մոսկվայի «Օլիմպիյսկի» մարզապալատում հազարավոր մարզասերներ ականատես եղան այնպիսի մի տեսարանի, որի նմանը ոչ ոք չէր տեսել: Այն օրը, երբ մրցահարթակ էին դուրս եկել միջին քաշի ծանրորդները, Յուրի Վարդանյանը հինգ անգամ բարելավեց համաշխարհային ռեկորդները: Դե', մեկ մրցումում Յուրիի հինգ ռեկորդին մարզասերները սովոր էին, քանի որ նախաօլիմպիական տարում, ԽՍՀՄ ժողովուրդների 7-րդ սպարտակիադայի ժամանակ, Հայաստանի հավաքականի առաջատարն արդեն իսկ սահմանել էր հինգ համաշխարհային ռեկորդ, ինչի շնորհիվ, Հայաստանի հավաքականը դարձել էր Սպարտակիադայի երկրորդ մրցանակակիր՝ մի փոքր զիջելով Ռուսաստանի Դաշնության հավաքականին, որն, ըստ էության, ԽՍՀՄ ազգային հավաքականն էր: Բայց Օլիմպիական խաղերը չես համեմատի Սպարտակիադայի հետ: Այդ մթնոլորտն ուրիշ էր, էլ չենք խոսում պայքարի թեժության մասին: Օլիմպիադայում Յուրին ցանկանում էր դրսեւորել իր ողջ կարողությունները եւ, որ պակաս կարեւոր չէր, ռեւանշ վերցնել բուլղարացի ծանրորդ Բլագոյ Բլագոեւից, ում նա զիջել էր այդ տարվա Եվրոպայի առաջնությունում: Նա փայլեց՝ ցույց տալով ֆենոմենալ արդյունք: Երկամարտի գումարում նրա հավաքած 400 կիլոգրամը, իրոք, աննախադեպ արդյունք էր ծանրամարտի պատմության մեջ: Մինչ այդ, աշխարհի ոչ մի միջին քաշային ծանրորդի չէր հաջողվել ցույց տալ նման արդյունք:

Յուրիի 400 կիլոգրամ արդյունքը կարելի է համեմատել ամերիկացի հեռացատկորդ Բոբ Բիմոնի համաշխարհային ռեկորդի հետ, որ նա սահմանեց 1968 թվականի հոկտեմբերին, Մեխիկոյի Օլիմպիական խաղերի ժամանակ: Հիրավի, մասնագետներն այն կարծիքի էին, որ միջին քաշում 400 կիլոգրամի սահմանագիծը գերազանցելը վիճակված է 21-րդ դարի ծանրորդներին:

Եթե նա 1976-ին Լենինականում մասնակցեց «մինի Մոնրեալի», ապա այս անգամ ավելի լուրջ մրցապայքարում ապացուցեց, որ այդ պահին նա աշխարհում ուժեղագույն միջին քաշայինն է: Նա գերազանց հանդես եկավ Բուլղարիայի Վառնա քաղաքում կայացած «Բարեկամություն-84» միջազգային մրցաշարին, մրցաշար, որը սովորաբար անվանում են «աշխարհի փոքր առաջնություն»:

1985 թվականին ԽՍՀՄ սպորտի վաստակավոր վարպետ, Լենինի եւ Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանակիր Յուրի Վարդանյանը 7-րդ անգամ նվաճեց աշխարհի չեմպիոնի ոսկե մեդալը: Նույն թվականին նա երկրորդ անգամ ընտրվեց Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր... Ցավոք, երբ Խորհրդային Միությունը փլուզվեց, Յուրի Վարդանյանը չդիմացավ իշխանության եկած «նեոբոլշեւիկների» վայրիվերումներին ու լքեց Հայաստանը: Բայց իսկական հայրենասերը չդիմացավ նաեւ ԱՄՆ-ում խոստացված դրախտին եւ 2009 թվականին վերադարձավ Հայաստան, որտեղ նրան հիշում ու սպասում էին:

Նա որոշ ժամանակ աշխատեց որպես Հայաստանի նախագահի խորհրդական, ապա՝ Հայաստանի սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարար: 2014 թվականի հունիսից նա Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպանն է Վրաստանում, որտեղ շատ բան է անում Հայաստան-Վրաստան քաղաքական, տնտեսական, համայնքային ոլորտներում՝ է'լ ավելի խորացնելով միջպետական կապերը:

ԼԵՎՈՆ ԱԶՐՈՅԱՆ

«Սովետական Վրաստան» թերթի նախկին թղթակից

«Վրաստան» թերթի աշխատակազմի կողմից.

Հարգարժան Յուրի Նորայրի,

ի սրտե եւ անկեղծորեն շնորհավորում ենք Ձեզ, որպես հայոց սպորտի երեւելի դեմքերից մեկի, այսօր արդեն նաեւ անվանի դիվանագետ, Վրաստանում Հայաստանի արտակարգ ու լիազոր դեսպանին 60-ամյակի առթիվ: Համոզված ենք, որ ինչպես մինչ այսօր, այնպես էլ՝ հետայսու, Դուք նույն նվիրումով ու արհեստավարժությամբ կշարունակեք Ձեր դիվանագիտական, պետական եւ հասարակական գործունեությունը՝ հանուն Հայաստան ու Վրաստան երկրների միջպետական կապերի է'լ ավելի զարգացման ու խորացման:

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

ԴՅՈՒՐԱՑՎԵՑ ՀՈՂԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ

Საქართველოს ოუსტიციის სამინისტრო

Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին Սամեգրելո-Զեմո Սվանեթիի երկրամասային աշխատակազմի ներկայացուցիչներին անձամբ ներկայացրեց օրենսդրական փոփոխությունները, ըստ որոնց, հողի գրանցումը բնակչության համար դառնում է դյուրամատչելի:

Հանդիպումը, որը տեղի ունեցավ Զուգդիդիի Արդարադատության տանը, ներկա էին Սամեգրելո-Զեմո Սվանեթիի տարածաշրջանի մունիցիպալիտետների վարչության նախագահներն ու սակրեբուլոյի ներկայացուցիչները: Հանդիպման նպատակը հավաքվածներին հողի գրանցման դյուրացված ընթացակարգի վերաբերյալ սպառիչ տեղեկատվության հանձնումն էր, որպեսզի նրանք կարողանան քաղաքացիներին համապատասխան խորհրդատվություններ իրականացնել: Հանդիպմանը ներկա էին նաեւ արդարադատության փոխնախարար Միխեիլ Սարջվելաձեն, հանրային ռեեստրի ազգային գործակալության նախագահ Պապունա Ուգրեխելիձեն եւ Սամեգրելո-Զեմո Սվանեթիի տարածաշրջանի նահանգապետ Լեւան Շոնիան:

Արդարադատության նախարարի նախաձեռնությամբ, նման հանդիպումներ կանցկացվեն նաեւ Վրաստանի բոլոր տարածաշրջաններում:

Վրաստանի խորհրդարանը, երրորդ ընթերցմամբ, հաստատեց օրինանախագիծը, որը դյուրացնում է հողի գրանցումը, եւ քաղաքացիների համար այն առավելագույնս մատչելի դարձնում: Օրինանախագծի հեղինակը արդարադատության նախարարությունն է: Ներկայացրած փոփոխությունների նպատակը այն բարդությունների վերացումն է, որոնք ծառանում են հողամասերի տերերի առջեւ գույքի գրանցման գործընթացում: Օրինանախագծի համաձայն, հողամասի գրանցման ընթացակարգը դյուրացվում է, վերացվում են այն արգելքները, որոնք ծառանում են քաղաքացիների առջեւ, միաժամանակ, խրախուսվում է գրանցման գործընթացը:

Նոր նախաձեռնությունը կողմնորոշված է անշարժ գույքի գրանցման ընթացակարգի դյուրացմամբ եւ սեփականատերերի իրավունքների պաշտպանության ուղղությամբ:

Հատուկ նախագծի եւ համապատասխան օրենսդրական փաթեթի մշակումը պայմանավորված է հողի գրանցման գործընթացում առկա հիմնախնդիրներով: Մասնավորապես, այսօրվա դրությամբ, գրանցված է երկրում առկա հողամասերի 25 տոկոսը, ինչը շատ քիչ է: Փոփոխությունների գլխավոր նպատակը անմիջականորեն առնչվում է հողի գրանցման ընթացակարգի դյուրացմանն ու խրախուսմանը: Նախագծի շուրջ աշխատանքի ընթացքում բացահայտվեցին հողի գրանցմանն արգելակող հիմնախնդիրները, եւ դրանց վերացման նպատակով մշակվեցին օրենսդրական հատուկ փոփոխություններ, մասնավորապես, մշակվեց չափանախագծային միասնական չափորոշիչը, նախագծում ընդգրկված չափող կազմակերպությունները կանցնեն հավաստագրում:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)